

**ՀՈՒՇԱԳԻՐ**  
**(Մտադրությունների մասին համաձայնություն)**

ՀՀ, Երևան

10.09.2020թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը (պետական գրանցման համար՝ 222.160.699243, գտնվելու վայրը՝ ՀՀ, Երևան, Տերյան փողոց, թիվ 74. (այսուհետ՝ Հիմնադրամ-1), ի դեմս՝ ռեկտոր Վարդան Էդիկի Ուռուտյանի, որը գործում է Հիմնադրամ 1-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, եւ «ՇՈՒՇԻՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը (պետական գրանցման համար՝ 443.160.12377 գտնվելու վայրը՝ Արցախի Հանրապետություն, ք. Շուշի, Աշոտ Բեկորի 4 (այսուհետ՝ Հիմնադրամ-2), ի դեմս ռեկտոր Հովհաննես Վաչեի Թոքմաջյանի, որը գործում է Հիմնադրամ 2-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին Մտադրությունների մասին սույն համաձայնությունը (այսուհետ նաեւ՝ Հուշագիր)՝ հետևյալի մասին.

1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում Կողմերը պայմանավորվում են մեկտեղել իրենց ջանքերը, միջոցներն ու փորձը եւ գործակցել հետևյալ ուղղություններով.
  - 1.1. պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումների ծրագրերի իրականացում և հավաստագրում,
  - 1.2. համատեղ վերապատրաստման կարճաժամկետ ծրագրերի իրականացում և մասնակիցների հավաստագրում,
  - 1.3. համատեղ փոխանակման ծրագրերի իրականացում և մասնակիցների հավաստագրում,
  - 1.4. դասընթացավարների վերապատրաստում (TOT),
  - 1.5. փորձի փոխանակում պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի հետ,
  - 1.6. երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացում, մասնագիտական գրականության, մեթոդական ուղեցույցների, աշխատությունների, պարբերականների եւ այլ նյութերի փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման եւ Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում եւ լուծում,
  - 1.7. գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացում,
  - 1.8. փոխադարձ հետաքրքրության շրջանակներում համաձայնեցված գիտական հետազոտությունների, խորհրդատվությունների իրականացում,
  - 1.9. անտառների վերականգնման, ինչպես նաև էկոհամակարգում ծագած այլ խնդիրների լուծման ծրագրերի համատեղ մշակում և իրականացում,
  - 1.10. սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համապատասխան սարքավորումների, լաբորատոր եւ այլ միջոցների օգտագործում,
  - 1.11. համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվության հայցում եւ տվյալների ստացում,
  - 1.12. ուսանողների ուսումնական, արտադրական, նախաավարտական եւ գիտաարտադրական պրակտիկաների անցկացում:
2. Հուշագրի դրույթներից բխող աշխատանքների բնույթի, ծավալի եւ այլ անհրաժեշտ

